

ՄԱՅԻՍԻ 11-ը

Առաւօտ էր. դեռ նոր էր երեացել արեւը Գեղամայ սարերի ետեից, բայց ս. Էջմիածնի տպարանն արդէն բաց էր և համարեա բոլոր դրաշարները հաւաքուած: Կոնդակն արագութեամբ շարուեց և հէնց որ առաջին համարը հանուեց մամուլի տակից, ամենքն անմիջապէս հաւաքուեցին առաջին թերթի շուրջը և սկսան կարդալ ու սրբագրել այն: Տպագրութիւնը սկսուեց աչքալուսով ու շնորհաւորութիւններով:

Բայց նախ քան այդ՝ վաղարշապատի ժողովուրդն արդէն իմացել էր կոնդակի մասին և շտապել վանքի բակը. ընդհանուր տրամադրութիւնը ուրախ էր և զգացուած, պահանջեցին կատարել Հայրապետական մաղթանք, որն արդէն նշանակուած էր: Ուղեցին ներկայանալ ծերունի Հայրապետին, բայց նա գիշերը լաւ չէր քնել և հանգստանում էր: Պատարագը սկսուեց. Պատարագիչ էր լուսարարապետ Ղևոնդ եպիսկոպոսը, տաճարն ու բակը ժողովրդով լեցուն էր: Վեհափառը եկեղեցի իջնել չկարողացաւ. հարկ սւորուեց մաղթանքը կատարել վեհարանի առաջ պարտիզի կողմից, որովհետեւ ժողովուրդն ուզում էր տեսնել իւր սիրելի կաթողիկոսին: Պատարագը վերջացաւ, և ժողովուրդը հոգեորական դասի հետ գիմեց դէպի վեհարանի բակը: Ծերունի Հայրապետը դուրս եկաւ պատշգամբ իւր սիրած վարդապետական պարզ խաչով և նստեց բազկաթոռի վերայ: Մաղթանքը սկսուեց, վերջին աղօթքից առաջ վեհարանի մուտքի աստիճանների վրայ բարձրացաւ եղիշէ ծ. վարդապետ Մուրադեանը և ժողովրդին դառնալով ասաց հետեւեալը.

«Սորանից ուղիղ տասն և չորս տարի առաջ՝ մայիս ամսի 3-ին հայ ազգն՝ իւր ընտրելագոյն ներկայացուցիչների միջոցաւ միաձայն ընտրեց և հայրապետական աթոռ բարձրանալու կոչեց Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեանին, որին Հայրիկ սիրանուն էր տալիս:

Ամբողջ մի տարի և երեք ամիս անհամբեր սպասելուց

յետոյ՝ 1893 թուի օգոստոսին Ռուսաստան մուտք դործեց Նորին Վեհափառութիւն Մկրտիչ I աղգընտիր կաթողիկոսը և սկսուեց այն հանգիստաւոր գնացքը, որի նմանը դարերից ի վեր չէր տեսել հայ աղգը և նրա հայրապետը՝ Ռ՝վ չի յիշում այդ յուսոյ և ոգևորութեան, արցունքի և ուրախութեան խորհրդաւոր ժամերը, երբ մեր սիրտը լայնացել, յոյսերի ծով էր դարձել և սպասում էինք բարգաւաճ և ծաղկած վիճակի մէջ տեսնել մեր դարաւոր սրբութիւնը՝ — եկեղեցին և եկեղեցական բոլոր հաստատութիւնները։ Սակայն ներքին և արտաքին բազմաթիւ հանգամանքները արգելք հանգիստացան այդ բանին և հայ ժողովուրդն ու եկեղեցին քամեցին արտասունքի և արեան դառն բաժակը և խոցոտուեցին անխնայ։ Վշտապատ հայ ժողովրդի միւլթարութիւնն անցեալ տարի սկսուեց նրա վիրաւոր և արիւնաներկ եղած ժամանակ և այժմ էլ, այդ ուրախառիթ ժամին դեռ բշտորովին չեն ցամաքել նրա արիւնն ու արցունքները։ Սակայն ազատութիւնն ու վերածնութիւնը միշտ այդ ճանապարհով է գալիս և որքան դժուարին փորձութիւններից յետոյ է լինում երկունքը, այնքան սիրելի և անգնահատելի է լինում նա ժողովրդին։

Այսօր Հայաստանեայց եկեղեցին ազատուում է իրեն ոգուն միանգամայն խորթ բիւրօկրատիական կազմից և հայ ժողովուրդն ընդարձակ իրաւունք ստանում իւր եկեղեցին ծաղկած վիճակի մէջ պահելու և նրա պաշտօնետներին ընտրելու խնդրում։

Այսօր իրականացած ենք տեսնում այն տենչանքը, որը ոգևորութեան արցունք էր կորցում մեր աչքերից դեռ 1893 թուին և որին սպասում էինք անհամբեր։

Այն, այսօրուանից իւրաքանչիւր մարդ իրաւունք է ստանում իւր ցանկութիւնն ու կամքն արտայայտելու, համագումարելու և գնելով Նորին Սրբութեան առաջ, իրագործուած տեսնելու այն։ Ընտրական իրաւունքի ժամանակ մարդկանց ձայները նման են այն ստորերկրեայ կաթիլներին, որոնք երկրի ներսի շերտերում կամաց կամաց ի մի համախմբուելով, կազմում են աղբիւրներ և

գետակներ և գուրս հոսելով, սփռում շրջակայքի վրայ կեանք և կենդանութիւն: Նոյն է և ժողովրդի ձայնը, որ քան համերաշխ և բազմաթիւ է լինում այն, որքան դիտակցաբար և ազատօրէն արտայայտուած, այնքան անկասկած է լինում նրա արդիւնքն ու փրկարար հետեանքը: Մի հաստատութիւն, ժողովրդական մի գործ ծաղկած և կենդանի պահելու համար չկայ առաւել կատարեալ մի ձև և միջոց, քան նոյն ժողովրդի ձայնն ու ընտրական սկզբունքը և ահա այսօր Նորին Սրբութիւնը այդ իրաւունքն է վերականգնում մեր եկեղեցու վերաբերութեամբ, որից երկար ժամանակ զրկուած էինք: Այսօր չափահաս ենք համարուում և մեզ է յանձնուում մեր եկեղեցու բարգաւաճման իրաւունքը. այսօր ահա վերջապէս իրագործուում է հայ ժողովրդի ընտրելագոյն դաւակների փափաղը: Կեցցէ՛ Նորին Սրբութիւնը, մաղթենք նրան երկար տարիներ, որ անձամբ տեսնել կարողանայ իւր սկսած գործի բարերար արդիւնքը, կեցցէ՛ հայ ժողովուրդը, տայ Աստուած որ նա գիտակից կերպով պահպանի իւր ձեռք բերած իրաւունքը և որպէս նախանձախնդիր իւր դարաւոր աւանդի՝ եկեղեցու բարգաւաճման, ցոյց տայ դրացիներին իւր հասուն և օրինակելի ընթացքը»:

Որոտաց ժողովրդական «կեցցէն» Նորին սրբութեան, որը երկար ժամանակ չէր դադարում. մաղթանքը վերջացաւ. 86 տարեկան ծերունի Հայրապետը կանգնեց, նորից ուղղեց իւր պարթև հասակը, շնորհակալութիւն յայտնեց ժողովրդին և խնդակցութիւն, որ ինքը կարողացաւ իրագործել եկեղեցու մեծագոյն կարիքը: Մաղթեց, որ խելացի և գիտակից կերպով օգտուի նա իւր այդ իրաւունքով և անփոշմանելի դարձնի այս մեծ օրը: Այնուհետև առուեց ու խաչիւս. Վեհափառը օրհնեց ժողովրդին և շարժուեց դէպի դահլիճ. կրկին լսուեցին ժողովրդի որոտաձայն կեցցէ-ներ և ուրախ բացականչութիւններ:

Մաղթանքից յետոյ ճեմարանի աւարտող ուսանողները հոգեհանգիստ կատարեցին իրենց մեծ բարերար հանգու-

ցեալ Գէորգ Դ. կաթողիկոսի շիրմի վրայ: Հոգեւորական դասը շրջապատեց խնկելի Հայրապետի ծաղկազարդ դամբարանը և հոգեհանգիստ կատարեց, որի ժամանակ աւարտող ուսանողներէն մինը ճառ խօսեց՝ կրկնելով աւանդաբար սրբազործուած այն ուխտը, որ աշակերտները միշտ ուխտում են այդ գերեզմանի առաջ՝ ծառայել Հայ ժողովրդին և Հայաստանեայց եկեղեցուն: Հոգեհանգստից յետոյ ճեմարանի տեսուչ Հայր Գարեգինը ուսանողներին ներկայացրեց Վեհափառին և ստացաւ նրա հայրական օրհնութիւնը:

Պատարագից և մաղթանքից յետոյ Վեհափառ կաթողիկոսին ներկայացաւ մի պատգամաւորութիւն Վաղարշապատի Հայ ժողովրդից, որը շնորհակալութիւն յայտնեց այդ օրուայ կոնդակի համար՝ յուսալով, որ Հայ ազգը միշտ ոգևորութեամբ կը տօնի այդ ուրախալի օրը: Վեհափառը գոհ մնաց և իւր կողմից էլ վստահութիւն և յոյս յայտնեց, որ Հայ ժողովուրդը խելացի, գիտակից կերպով կօգտուի իւր այդ մեծ իրաւունքից և ցոյց կը տայ իւր կատարեալ հասունութիւնը:

Վեհափառ Հայրապետը բարեհաճեցաւ արքութիւն շնորհել Գրիգոր եպիսկոպոս Գառնակերեանին, որն ամսոյս տասն և վեցին ուղևորուեցաւ Երուսաղէմ ս. տեղեաց ուխտադրութեան:

Ապրիլի 29-ին Թիֆլիսից ս. Էջմիածին վերադարձաւ Արարատի խմբագիր Եղիշէ Ժ. վարդապետը, որին յանձնուած էր կոնսիստորիայի ծառայողների գործի քննութիւնը:

Գործիսից օ. Էջմիածին վերադարձաւ Մեսրոպ վարդապետ Տէր Մովսիսեանը, որը գնացել էր կոտորածների ժամանակ արկածեալներին օգնելու գործով:

Սուրբ Էջմիածին վերադարձաւ և իւր նոր պաշտօնատեղին՝ Ղզլար ուղևորուեց Հին Նախիջևանի Փոխանորդ Թովմա վարդապետը:

Սինօդի անդամութեան պաշտօնից արձակուեց Մատթէոս վարդապետ Մատթէոսեանը, որին Վեհափառ Կաթողիկոսը ցանկութիւն ունէր Թաւրիզ ուղարկելու:

Տպարանական ժողովի անդամ նշանակուեցին Խաչակ վարդապետն ու Երեմիա աբեղան:

Շաւնաբաթի վանահայր հաստատուեց Խոսրով վարդապետ Փիլթակեանը:

Բագուի գործակալ արժանապատիւ Զաւէն վարդապետը հեռագրով շնորհակալութիւն յայտնելով նորին Վեհափառութեան մայիսի 10-ի կոնդակի առթիւ, խնդրել է իրեն ազատ համարել Բագուի գործակալի պաշտօնից և նշանակել գործակալի օրինաւոր ընտրութիւն:

Մի քանի տեղերից ստացուած են խնդիրներ, որոնցով խնդրում են թոյլ տալ այրի քահանաների կրկնամուսնութիւնը:

